17. Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

18. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել լիցենզիայի հիման վրա:

19. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարումները կատարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

20. Կազմակերպությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

21. Կազմակերպության կառավարումն իրականացնում են Հիմնադիրը, Վաղարշապատ համայնքի ղեկավարը և գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը: Լիազորված համայնքային մարմնի ղեկավարը և կազմակերպության գործադիր տնօրենը Կազմակերպության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իրենց կողմից ներկայացվող Կազմակերպության:

22. Հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

23. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- ա) Կազմակերպության հիմնադրումը
- բ) Կազմակերպության գործունեությանն առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը
- գ) Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրակցվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը
- դ) Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը
- ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը
- զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը
- է) Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը
- ը) Կազմակերպության կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի սահմանումը
- թ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը

24. Համայնքի ղեկավարն իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

25. Համայնքի ղեկավարը՝

- ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը
- բ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության գործունեության նկատմամբ
- գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում Կազմակերպության գործադիր մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները
- դ) լսում է Կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները
- ե) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպությանն ամրակցված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ
- զ) ՀՀ օրենսդրությամբ Հիմնադրի որոշմամբ, Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար
- է) հաստատում է Կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը
- ը) **հաստատում է** հաստատության տարեկան եկամուտների ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում Հիմնադրի հաստատմանը
- ե) իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, իրավական այլ ակտերով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

26. Տնօրենը, պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Տնօրենը՝

- ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ
- բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ

թվում՝ ֆինանսական միջոցները,

- գ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ
 - դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր
 - ե) առաջարկության տեսքով համայնքի ղեկավարին է ներկայացնում հաստատության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները
 - զ) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման և կարգապահական տույժի միջոցներ
 - է) կատարում է աշխատանքային պարտականությունների բաշխում
 - ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց պատշաճ իրականացումը
 - թ) վերահսկում է Կազմակերպության աշխատակիցների՝ իրենց աշխատանքային պարտականությունների կատարման գործընթացը
 - ժ) իրականացնում է կադրերի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական որակի բարձրացման համար
 - ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանումը
 - ժբ) ապահովում է հաստատության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներայացնում Հիմնադրին
 - ժգ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ
27. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է Կազմակերպության այլ աշխատակից:

28. Կազմակերպությունն ունի հետևյալ կառուցվածքը՝

- ա) տնօրեն
- բ) գլխավոր հաշվապահ
- գ) աշխատակազմ /համաձայն հաստիքացուցակի/

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱԿՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

29. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է Կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև Կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից

30. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը՝ առանց օտարման իրավունքի

31. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է Կազմակերպությունը

32. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնազանձում դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում

33. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրակցված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ ղնելու, անհատույց օգտագործման հանձնելու

34. Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրակցված գույքը հանձնելու վարձակալության, բացառությամբ հիմնադրի և ավագանու սահմանած դեպքերի: Ամրակցված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են, բացառությամբ ամրակցված գույքի վարձակալությունից գոյացած վճարներից, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքային բյուջե: Կազմակերպությանն ամրակցված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները Հիմնադրի սեփականությունն են:

35. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

36. Հաստատության լուծարման դեպքում բնրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

37. Կազմակերպության ֆինանսական միջոցների հիմնական աղբյուրը հանդիսանում է Վաղարշապատ համայնքի բյուջետային հատկացումները, ինչպես նաև վճարովի ծառայություններից և սույն կանոնադրությամբ նախատեսված և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեության արդյունքում գոյացած սեփական միջոցներից, իրավաբանական և ֆիզիկական անձանց կամավոր ներդրումներից և հանգանակություններից, տեղական և արտասահմանյան միջազգային կազմակերպությունների կրթամշակութային և ուսումնական գործունեության տրամադրած դրամաշնորհներից: Տարբեր աղբյուրներից մուտք եղած բոլոր միջոցները մտնում են կազմակերպության եկամուտների մեջ և կազմում են նրա ֆինանսական միջոցների միասնական ֆոնդը:

38. Կազմակերպության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, Հիմնադրի կողմից Լիազորված համայնքային մարմինը:

39. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԸ

Թիվ 1 տեղամաս – Վահան Թոթովենցի անվան գրադարան՝ ք. Էջմիածին, Արագածի զանգված, թիվ 8 մանկապարտեզի շենք,

Թիվ 2 տեղամաս – Արարատ Այվազյանի անվան գրադարան՝ ք. Էջմիածին, Կոմիտաս 12, Ոսկեհատի տեղամաս – մարզ Արմավիր, Վաղարշապատ համայնք, գյուղ Ոսկեհատ, Մաշտոցի փող., 43 շենք /Ոսկեհատի վարչական շենք/,

Շահումյանի տեղամաս – մարզ Արմավիր, Վաղարշապատ համայնք, գյուղ Շահումյան, Լևոն Նավասարդյան 19/4,

Աղավնատան տեղամաս – մարզ Արմավիր, Վաղարշապատ համայնք, գյուղ Աղավնատուն, Նշան Մաթևոսյան պողոտա 18:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

40. Կազմակերպությունը կարող վերակազմակերպվել կամ լուծարվել Հիմնադրի որոշմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում նաև դատական կարգով:

41. Կազմակերպության լուծարման դեպքում գույքը հանձնվում է համայնքին:

42. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

VII. ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

43. Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով:



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 149-Լ

«24» հունիսի 2026թ.

ք. Էջմիածին

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,
ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 23.12.2025 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 14-Լ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ 17-ՐԴ
ՎԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 28-րդ կետերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետի պահանջներով, հիմք ընդունելով աշխատակազմի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լիլիթ Հակոբյանի կողմից ներկայացված զեկուցագիրը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ավագանու 23.12.2025 թվականի «Վաղարշապատ համայնքի համայնքային հիմնարկների, համայնքային ենթակայությամբ ոչ առևտրային կազմակերպությունների 2026 թվականի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 14-Լ որոշմամբ հաստատված թիվ 17-րդ հավելվածը:

3. Հաստատել նոր խմբագրությամբ Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2026 թվականի հուլիսի 1-ից:

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Մեխակյան Արգիշտի Մեխակի		_____	_____
2.	Յայլոյան Լյուդվիկ Գրիշայի		_____	_____
3.	Նիկողոսյան Գոհար Մոսիտի		_____	_____
4.	Թովմասյան Սաթենիկ Ռաֆիկի		_____	_____
5.	Մելիքյան Ներսես Ռոբերտի		_____	_____

- 6. Խոստեխյան Նորայր Պողոսի
- 7. Ենգիբարյան Լիլիթ Ալբերտի
- 8. Խաչատրյան Լևոն Խաչիկի
- 9. Եղիազարյան Գևորգ Սահակի
- 10. Եփրեմյան Արթուր Մեխակի
- 11. Գրիգորյան Լուսինե Զավենի
- 12. Մովսիսյան Կարեն Սամվելի
- 13. Գրիգորյան Վաչիկ Գրիգորի
- 14. Ռաայան Լիզա Յաշայի
- 15. Ավագյան Ռաֆիկ Լևոնի
- 16. Մամոն Ավդալայի Սադոյան
- 17. Աննա Մարատի Գևորգյան

[Handwritten signatures in blue ink, corresponding to the list items above]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՄԵԽԱԿՅԱՆ

Վերջին քառ
հետազոտված կապիտալ
առաջարկը համապատասխան
է Գ. Գ. Կոնյանցի, Գ. Կոնյանցի
և Գ. Կոնյանցի կողմից ներկայացված
փորձագրությանը:

Ս. Ա. Կոնյանցի


ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ
ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻՆ

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մեխակյան, հայտնում ենք Ձեզ, որ Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ-ում անհրաժեշտություն է առաջացել կատարել հաստիքացուցակի փոփոխություն՝ պայմանավորված Աղավնատուն բնակավայրի մշակույթի տունը որպես մասնաճյուղ կցելու հանգամանքով: Առաջարկում ենք քննարկել մշակույթի պալատի հաստիքացուցակի փոփոխության ներկայացված տարբերակը: Միաժամանակ հայտնում ենք, որ մասնաճյուղի ավելացման հետևանքով անհրաժեշտություն է առաջանում փոփոխություն կատարել նաև հաստատության կանոնադրության մեջ, ինչը հնարավորություն կտա նոր խմբագրությամբ հաստատել այն՝ համապատասխան ոլորտի նոր պահանջներին: Խնդրում ենք Ձեր հանձնարարականը համապատասխան ստորաբաժանումներին՝ ուսումնասիրելու հաստիքացուցակը և կանոնադրությունը, ինչպես նաև ապահովել դրանց հետագա ընթացքը:

Հարգանքով՝

Կրթության, մշակույթի, սպորտի և

երիտասարդության հարցերի բաժնի պետ՝  Լ. Հակոբյան

12.06.2026

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 24.06.2026թ.
Թիվ 149 -L որոշմամբ

**2026 թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ»
ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային
դրույքաչափերը**

1. Աշխատակիցների քանակը 72

2. Հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Հ/Հ	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆոնդ
1	Տնօրեն	1	350000	350000
2	Տնօրենի տեղ.ստեղծագործական հարցերով	1	250000	250000
3	Տնօրենի տեղակալ /ծրագրերի ղեկավար/	1	250000	250000
4	Գլխավոր հաշվապահ	1	220000	220000
5	Տնտեսավար	1	200000	200000
6	Ադմինիստրատոր	1	200000	200000
7	Տեխնիկ-օպերատոր	1	220000	220000
8	Հսկիչ	5	150000	750000
9	Հավաքարար	4	130000	520000
10	Պահակ	3	130000	390000
11	Բանվոր	2	130000	260000
12	«Էջմիածին պարարկեստի կենտրոն» ժող. պարերի գեղ.խմբի ղեկավար	1	180000	180000
13	«Վաղարշապատ» ժող. գործիքների նվագախմբի գեղարվեստական ղեկավար	1	180000	180000
14	«Վաղարշապատ» ժող. գործիքների նվագախմբի նվագակցող	1	170000	170000
15	Վոկալ -գործիքային էստր. համույթի ղեկավար	1	160000	160000
Ը ն դ ա մ ե ն ը		25		4,300,000
Աղավնատուն մասնաճյուղ				
Հ/Հ	Հաստիքը	Միավոր	Դրույքաչափ	Աշխատավարձի ֆոնդ
1	Տնտեսական հարցերով պատասխանատու	1	220000	220000
2	Մշակութային միջոցառումների կազմակերպիչ	1	200000	200000
3	Տեխնիկ օպերատոր	1	220000	220000

4	Մեթոդիստ	3	180000	540000
5	Պարի խմբավար	10	150000	1500000
6	Նկարչության խմբակի ղեկավար	5	150000	750000
7	Երաժշտական խմբակի ղեկավար	16	150000	2400000
8	Պահակ	2	130000	260000
9	Բանվոր	2	120000	240000
10	Հավաքարար	3	120000	360000
11	Այգեպան	1	120000	120000
13	Հսկիչ	2	130000	260000
Ը ն դ ա մ ե ն ը		47		7,070,000
Ընդհանուր		72		11,370,000

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ



Կազմված է 24.06.2026թ. և բաղկացած է 6 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու
24 հունիսի 2026թ.
թիվ 149-Լ որոշմամբ

համայնքի պեղակար



Արտոնորդ Սեդակյան
Վ.Տ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 07.06.2022 թ.
գրանցման համար 99.215.1242552
ՀՎՀՀ՝ 04442766
____.____.20__ թ. գրանցված
կանոնադրության թիվ _____.
փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից “____” _____ 20__թ.

աշխատակից՝

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ «ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ռ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ հաստատություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով ու կարգադրություններով եւ սույն կանոնադրությամբ:

3. Հաստատությունը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, ք.Էջմիածին, Սուրբ Մեսրոպ Մաշտոցի թիվ 75 հասցեում:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք եւ իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային եւ անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ Վաղարշապատի համայնքապետարանի «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

հայերեն կրճատ՝ «Կոմիտասի անվան մշակույթի պալատ» ՀՈԱԿ.

ռուսերեն լրիվ՝ «Дворец культуры имени Комитаса» общинная некоммерческая организация мэрии города Вагаршапата.

ռուսերեն կրճատ՝ «Дворец культуры имени Комитаса» ОНО.

անգլերեն լրիվ՝ “Cultural Palace after Komitas” community non-profit organization of the Municipality of Vagharshapat.

անգլերեն կրճատ՝ “Cultural Palace after Komitas” CNPO.

6. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով եւ իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձեաթղթեր, խորհրդանիշ եւ այլ անհատականացման միջոցներ՝ անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուներով:

7. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ եւ բանկային հաշիվ:

8. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

9. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա մշակութային հաստատությունների եւ կազմակերպությունների հետ:

10. Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական եւ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

11. Հաստատությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ, որոնք ստեղծվում են Հիմնադրի որոշմամբ, և օրենքով սահմանված կարգով ենթակա են հաշվառման իրավաբանական անձանց գրանցումն իրականացնող մարմնի կողմից:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

12. Հաստատության նպատակն ու գործառույթներն են՝

- մշակութային գործունեության իրականացում,
- համայնքի բնակչության մշակութային-տեղեկատվական սպասարկում, մշակույթի մասսայականացում, մշակութային գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն,
- մշակույթի և այլ արժեքների տարածում և լուսաբանում, համայնքի բնակչության քաղաքական, բարոյական, գեղագիտական դաստիարակություն, ազգային ինքնագիտակցության ու հայրենասիրության ձևավորում, մասնագիտական որակի զարգացում, համապատասխան գիտելիքների ուսուցում ու տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում,

- մշակութային ֆոնդի պաշտպանվածության և անվտանգության ապահովում,
 - թատերական հայեցակարգի մշակում, դրանց արմատավորում և տարածում, թատերական ավանդույթների վերականգնում, թատրոն-ստուդիայի կամ թատերական խմբերի ձևավորում, թատերական խմբերի հյուրընկալում
 - նմուշների և այլ ֆոնդի համալրում գնումների, նվիրատվությունների և այլ միջոցներով,
 - ազգային և արտասահմանյան պետությունների մշակութային, գիտական հարստությունների, միջազգային հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ սերտ համագործակցություն.
 - հասարակության ստեղծագործական ներուժի վերարտադրման և զարգացման համար պայմանների ստեղծումը:
 - Համերգների, միջոցառումների, ցուցադրությունների կազմակերպում:
13. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային եւ համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
14. Հաստատությունը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում:
15. Հաստատությունը Հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

16. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը՝ համայնքի ավագանին, համայնքի ղեկավարը և օրենքով սահմանված կարգով նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը:

17. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

18. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

- հաստատության հիմնադրումը,
- հաստատության գործունեության առարկայի եւ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
- հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող եւ (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը,
- հաստատության կանոնադրության հաստատումը եւ դրանում փոփոխությունների կատարումը,
- հաստատության կառավարման համակարգի սահմանումը.,
- հաստատության վերակազմակերպումը եւ լուծարումը.
- հաստատության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

19. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

20. Համայնքի ղեկավարը՝

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձեւավորումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
- կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումների պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները եւ ցուցումները.
- լուծ է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրանց

գործունեության վերստուգման արդյունքները.

- վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման եւ պահպանության նկատմամբ.

- ՀՀ օրենսդրությամբ համայնքի ավագանու որոշմամբ, հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

- հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները եւ տարեկան հաշվեկշիռը.

- կազմում է հաստատության հատիքացուցակը և ներկայացնում ավագանու հաստատմանը.

- հաստատում է եկամուտների ու ծախսերի նախահաշիվը

- իրականացնում է օրենքով, ավագանու որոշումներով, իրավական այլ ակտերով և հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

21. Հաստատության գործադիր մարմինը՝ տնօրենը՝

- իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը:

- օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ եւ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

22. Հաստատության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը պարտավոր է չկատարել Հիմնադրի օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

23. Տնօրենը՝

- առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը եւ կնքում է գործարքներ,

- առաջարկության տեսքով համայնքի ղեկավարին է ներկայացնում հաստատության կառուցվածքը եւ կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի եւ ավագանու որոշումներով եւ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

- տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

- աշխատանքի նշանակում եւ աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր,

- բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

- կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալի (ների) եւ աշխատակիցների միջեւ,

- օրենքով եւ սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ եւ վերահսկում դրանց կատարումը,

- վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

- ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության եւ անվտանգության տեխնիկայի պահպանումը.

- ապահովում է հաստատության գործունեության մասին համապատասխան հաշվետվությունների կազմումը և դրանք սահմանված կարգով ներայացնում հիմնադրին,

- գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով հաստատությանը պատճառած վնասի համար,

- իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող եւ հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

24. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է տեղակալը կամ հաստատության աշխատակիցներից մեկը:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱԳՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ

25. Հաստատությանն ամրացվում է վաղարշապատ համայնքի էջմիածին քաղաքի Սբ.Մ.Մաշտոցի թիվ 75 հասցեում գտնվող անշարժ գույքը:

26. Հաստատության սեփականությունը ձևավորվում է Հաստատության հիմնադրման ժամանակ և հետագայում Հիմնադրի կողմից անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացված կամ սեփականության իրավունքով նրան հանձնվող /ամրացվող/, ինչպես նաև Հաստատության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

27. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, Հիմնադրի որոշումներին և /կամ/ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, առանց օտարման իրավունքի:

28. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է Հաստատությունը:

29. Հաստատության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

30. Հիմնադիրը կարող է Հաստատությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Հաստատությանն ամրացված գույքը:

31. Հաստատությունը կամ հաստատության տնօրենը իրավունք չունի հադես գալ որպես երաշխավորող անձամբ կամ հաստատությանը անհատույց գույքով, դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման այլ անձանց հանձնելու, եթե այլ բան նախատեսված չէ օրենքներով:

32. Հաստատությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը հանձնելու վարձակալության, բացառությամբ հիմնադրի և ավագանու որոշմամբ սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են, բացառությամբ գույքի վարձակալությունից գոյացած վճարների, որոնք սահմանված կարգով ուղղվում են համայնքի բյուջե: Հաստատությանն Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

33. Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

34. Հիմնադրի կողմից գույքը Հաստատությանն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ Հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

35. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

36. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

37. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝
- բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցներ,
- հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները:

38. Հաստատությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով:

39. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների

հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

40. Հաստատության ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրն ու Հիմնադրի կողմից լիազորված համայնքային մարմինը:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ

41. Կազմակերպությունը ունի հետևյալ մասնաճյուղերը՝

1. Աղավնատուն բնակավայրի մշակույթի տուն /հասցե՝ Վաղարշապատ, Աղավնատուն բնակավայր, Նշան Մաթևոսյան պողոտա, 18:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

42. Հաստատության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

43. Հաստատության շահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

44. Հաստատությունը վերակազմակերպվում եւ լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Հաստատությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև դատական կարգով:

45. Հաստատության լուծարման դեպքում գույքն ուղարկվում է համայնքային բյուջե:

46. Հաստատության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

VIII. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Այն բոլոր հարցերը, որոնք սույն կանոնադրությամբ չեն կարգավորվել, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ ՀՀ Սահմանադրությամբ կամ այլ օրենքներով և հիմնադրի որոշումներով:



**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 150 -Լ

«24» հունիսի 2025թ.

ք. Էջմիածին

**«ՈՍԿԵՀԱՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ «ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻԱՅՄԱՆ ՁԵՎՈՎ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՆՈՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 22.04.2026
ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 73-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 15-րդ, 28-րդ և 42-րդ կետերով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 63-րդ հոդվածով, 64-րդ հոդվածի 2-րդ մասով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ և 24-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Համայնքի Ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 99.215.840986) միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (պետական գրանցման համարը՝ 222.215.1366380):

2. Սահմանել, որ

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի իրավահաջորդն է և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին են անցնում «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի իրավունքները, պարտականությունները և վերջինիս սեփականություն հանդիսացող գույքերը /համաձայն գույքագրման արդյունքների/ փոխանցման ակտերին համապատասխան:

2) վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի միջոցների հաշվին.

3) վերակազմակերպումը ՀՈԱԿ-ների աշխատակիցներին աշխատանքից ազատելու հիմք չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի է ունենում հաստիքների կրճատում.

4) հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը և հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

3. Հաստատել նոր խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը:

4.Վաղարշապատ համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝

ա. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև գույքի կազմի և արժեքի և փոխանցման ակտի հաստատումը,

բ. «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի սույն որոշմամբ պայմանավորված պետական գրանցումից հանելու գործընթացի ապահովումը:

5. Ուժը կորցրած ճանաչել Վաղարշապատ համայնքի ավագանու 22.04.2026 թվականի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» և «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու, միաձուլման արդյունքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Վաղարշապատի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 73-Լ որոշումը

6. Սույն որոշան 2-րդ կետի 4-րդ ենթակետով հաստատված ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը և հաստիքացուցակը ուժի մեջ է մտնում վերակազմակերպման հիման վրա՝ իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում համապատասխան գրանցումը իրականացնելուց հետո:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Մեխակյան Արգիշտի Մեխակի		_____	_____
2.	Յայլոյան Լյուդվիկ Գրիշայի	_____	_____	_____
3.	Նիկողոսյան Գոհար Մոսիսի		_____	_____
4.	Թովմասյան Սաթենիկ Ռաֆիկի		_____	_____
5.	Մելիքյան Ներսես Ռոբերտի		_____	_____
6.	Խոստեխյան Նորայր Պողոսի		_____	_____
7.	Ենգիբարյան Լիլիթ Ալբերտի		_____	_____
8.	Խաչատրյան Լևոն Խաչիկի		_____	_____
9.	Եղիազարյան Գևորգ Սահակի		_____	_____
10.	Եփրեմյան Արթուր Մեխակի		_____	_____
11.	Գրիգորյան Լուսինե Զավենի		_____	_____
12.	Մովսիսյան Կարեն Սամվելի		_____	_____
13.	Գրիգորյան Վաչիկ Գրիգորի		_____	_____
14.	Ռապյան Լիզա Յաշայի		_____	_____
15.	Ավագյան Ռաֆիկ Լևոնի		_____	_____
16.	Մամո Ավդլայի Սադոյան		_____	_____
17.	Աննա Մարատի Գևորգյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ք. ՄԵԽԱԿՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հաստատված է ՀՀ Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու 24.06.2026թ.
թիվ 150-L որոշմամբ

2026թ. համար Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի
բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի աշխատակիցների քանակը և
հաստիքացուցակը

1. Աշխատակիցների քանակը 75
2. Հաստիքացուցակը

ՀՀ	Հաստիքացուցակ	Հաստիք
1	տնօրեն	1
2	գլխավոր հաշվապահ	1
3	ընտանեկան բժիշկ	11
4	ընտանեկան բուժքույր	18
5	ԲՄԿ բուժքույր	16
6	թերապևտիկ բուժքույր	4
7	դպրոցական բուժքույր	7
8	համակարգչային օպերատոր	9
9	մայրապետ	8
	Ընդամենը	75

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԵՆԱԿՅԱՆ

Կազմված է 24.06.2026թ. և բաղկացած է 6 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ _____

Հ Ա Ս Տ Ա Տ Վ Ա Ծ Է

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Վաղարշապատ համայնքի
ավագանու
24 հունիսի 2026թ.
թիվ 150-Լ որոշմամբ

համայնքի նախագահ

Արմավիրի մարզի



Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 26.01.2024 թ.
գրանցման համար 222.215.1366380
ՀՎՀՀ՝ 04452417

____.____.20__ թ. գրանցված կանոնադրության
թիվ _____.____ փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից “ ____ ” ____ 20__ թ.

աշխատակից՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
«ԽՈՅԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ի Ռ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

(Նոր խմբագրություն)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Համայնքային կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հանդիսանում է միացման ձևով վերակազմակերպման արդյունքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Ոսկեհատի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի իրավահաջորդը:

2. Համայնքային կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքն է՝ ի դեմս Վաղարշապատ համայնքի ավագանու:

3. Համայնքային կազմակերպության կառավարման լիազոր մարմինն է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ղեկավարը (այսուհետ՝ Լիազոր մարմին), որն ունի Համայնքային կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց լուծելու իրավունք, բացառությամբ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի:

4. Համայնքային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամաններով, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով:

5. Համայնքային կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, բանկային հաշիվ: Համայնքային կազմակերպությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ, որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Համայնքային կազմակերպությունն այլ կազմակերպությունների հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Համայնքային կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել տեղական առողջապահական կազմակերպությունների և այլ հաստատությունների հետ:

8. Համայնքային կազմակերպությունն ունի իր անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

9. Համայնքային կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:

10. Համայնքային կազմակերպության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն:

Հայերեն կրճատ՝

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի «Խոյի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ:

Ռուսերեն լրիվ՝

РА Армавирский марз «Хойская медицинская амбулатория» общинная некоммерческая организация:

Ռուսերեն կրճատ՝

РА Армавирский марз «Хойская медицинская амбулатория» ОНКО:

անգլերեն լրիվ՝

RA Armavir marz «Khoy medical ambulatory» community non-commercial organization:

անգլերեն կրճատ՝

RA Armavir marz « Khoy medical ambulatory» CNCO:

11. Համայնքային կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Վաղարշապատ համայնք, Արագած բնակավայր, 19-րդ փողոց, 1 շենք:

2. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

12. Համայնքային կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են.

- 1) Բնակչության առողջության պահպանումը, բարելավումը,
- 2) Առողջ ապրելակերպի քարոզչությունը,
- 3) Հիվանդությունների կանխարգելումը, վերահսկումը և շարունակական խնամքը,
- 4) Կանխարգելիչ պատվաստումների իրականացումը՝ ըստ ազգային օրացույցի,
- 5) Ուղեգում՝ մասնագիտական և լաբորատոր գործիքային ծառայությունների,
- 6) Առողջապահական կրթությունը,
- 7) Թերապևտիկ սոմատիկ հիվանդությունների բուժումը,
- 8) Սկրինինգային հետազոտությունների իրականացումը,
- 9) Հղիների նախածննդյան և հետծննդյան ընթացքի վարումը,
- 10) Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի տրամադրումը,
- 11) Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը:

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

13. Համայնքային կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, դրա լիազորած համայնքային մարմինը (Վաղարշապատ համայնքի ղեկավարը) և գործադիր մարմինը (այսուհետ՝ տնօրեն):

14. Լիազոր մարմին՝

1) Իրականացնում է համայնքային կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և կրում պատասխանատվություն դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և իր կանոնադրությանը համապատասխան՝ ստեղծում է համայնքային կազմակերպության հիմնարկներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ.

3) Կազմակերպության կանոնադրությամբ և օրենքով սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ըստ անհրաժեշտության հանդես է գալիս հիմնադրի անունից: Սույն կանոնադրությամբ սահմանված կարգով ձևավորում է նրա կառավարման մարմինները և վաղաժամկետ դադարեցնում դրանց լիազորությունները.

4) Իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպության գործունեության նկատմամբ.

5) Կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում համայնքային կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

6) Լսում է համայնքային կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

7) Իրականացնում է վերահսկողություն համայնքային կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանման նկատմամբ.

8) Վերահսկողություն է իրականացնում համայնքային կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ.

9) Օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս համայնքային կազմակերպության գույքի օտարման կամ օգտագործման հանձման համար.

10) Հաստատում է համայնքային կազմակերպության տարեկան ծախսերի նախահաշիվը, տարեկան հաշվեկշիռը, տարեկան ֆինանսական և այլ հաշվետվություններ.

11) Իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

15. Համայնքային կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է համայնքային կազմակերպության տնօրենը, ով պաշտոնի նշանակվում և ազատվում է (նրա լիազորությունները դադարեցվում են) լիազոր մարմնի հրամանով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Տնօրենը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է համայնքային կազմակերպության գործունեությունը և կրում պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրության, այլ իրավական ակտերի, համայնքային կազմակերպության կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

17. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով համայնքային կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված գույքային վնասի համար:

Տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունները չկատարելու համար:

18. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

Օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով տնօրենը կարող է համայնքային կազմակերպությունում իրականացնել նաև մասնագիտական վճարովի այլ աշխատանք:

19. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս համայնքային կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը, կնքում գործարքներ,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է համայնքային կազմակերպության գույքը այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

3) տալիս է համայնքային կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում համայնքային կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

6) սահմանում է համայնքային կազմակերպության կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը,

7) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

20. Համայնքային կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև համայնքային կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռքբերված գույքից:

21. Համայնքային կազմակերպության ֆինանսական միջոցները ձևավորվում են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային բյուջեից,

2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներից,

3) Հայաստանի Հանրապետության և արտերկրի իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագրային աշխատանքներից,

4) Իրավաբանական և ֆիզիկական անձանց (այդ թվում՝ արտերկիր) կողմից կատարված ներդրումներից, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մուծումներից, նվիրատվություններից, դրամաշնորհներից, ինչպես նաև կտակներից,

- 5) Համայնքային կազմակերպության գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական աշխատանքի արդյունքներից,
- 6) Կազմակերպության գույքից և գույքային իրավունքներից ստացված եկամուտներից.
- 7) Օրենքով չարգելված այլ աղբյուրներից:
22. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
23. Համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ համայնքային կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
24. Համայնքային կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է համայնքային կազմակերպությունը:
25. Համայնքային կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:
26. Համայնքային կազմակերպության ֆինանսական գործունեությունը ենթակա է ամսական վերստուգման(աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված անկախ աուդիտորական կազմակերպության կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված վերահսկողության այլ ստորաբաժանման կողմից:
27. Համայնքային կազմակերպությունն իր գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է ինքնուրույն՝ հիմնադրի կողմից սահմանված կարգով, իր առջև դրված նպատակների իրականացման համար:
28. Հիմնադիրը կարող է համայնքային կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված գույքը:
29. Համայնքային կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու կամ հանձնելու անհատույց օգտագործման:
30. Համայնքային կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքն օրենսդրությամբ սահմանված կարգով համայնքի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարուց ավելի բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:
31. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում ստացված եկամուտները և ամրացված գույքի վարձակալությունից գոյացած վճարները համայնքային կազմակերպության սեփականությունն են:
32. Համայնքային կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնելու ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
33. Հիմնադրի կողմից համայնքային կազմակերպությանը գույքն ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:
34. Հիմնադրի կողմից համայնքային կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի և պարտադիր պետական գրանցման ենթակա գույքի նկատմամբ համայնքային կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

35. Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Համայնքային կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս համայնքային մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

36. Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

37. Համայնքային կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

38. Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

39. Համայնքային կազմակերպությունը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

40. Համայնքային կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

41. Համայնքային կազմակերպության լուծարման դեպքում համայնքային կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է համայնքային բյուջե:



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 151 -Ա

«24» հունիսի 2025թ.

ք. Էջմիածին

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 693-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի սեպտեմբերի 9-ի 110-Ա և 2025 թվականի հոկտեմբերի 6-ի 120-Ա որոշումները, համաձայն որոնց «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը 3 /երեք/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվել են Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցի 0 հասցեում՝ Էջմիածնի համայնքապետարանի վարչական շենքի 3-րդ մասնաշենքի 2-րդ հարկում գտնվող 16.4քմ մակերեսով /2/13 համարակալումով/, 17.7քմ մակերեսով /2/14 համարակալումով/, 34.2քմ մակերեսով /2/15 համարակալումով/ և 36.6քմ մակերեսով /2/12 համարակալումով/ ոչ բնակելի տարածքները, սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով, որպես գրասենյակ օգտագործելու համար, հիմք ընդունելով 03.11.2025թ. /սեղանամատյան 9806/ կնքված տարածք անհատույց օգտագործման պայմանագրի 3.2-րդ կետը, «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (ՀԿ) նախագահ՝ Մ.Անտոնյանի դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին
















ՈՐՈՇՈՒՄ Է

1. Երկարաձգել Վաղարշապատ համայնքի և «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությանը միջև 03.11.2025թ. /սեղանամատյան 9806/ կնքված տարածքի անհատույց օգտագործման պայմանագրի ժամկետը մինչև 2031 թվականի հոկտեմբերի 20-ը և կնքել վերոնշյալ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

2. Պայմանագրի մյուս կետերը թողնել անփոփոխ:

3.«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Մեխակյան Արգիշտի Մեխակի		_____	_____
2.	Յայլոյան Լյուդվիկ Գրիշայի	_____	_____	_____
3.	Նիկողոսյան Գոհար Մոսիսի		_____	_____
4.	Թովմասյան Սարթենիկ Ռաֆիկի		_____	_____
5.	Մելիքյան Ներսես Ռոբերտի	_____	_____	_____
6.	Խոստեխյան Նորայր Պողոսի		_____	_____
7.	Ենգիբարյան Լիլիթ Ալբերտի		_____	_____
8.	Խաչատրյան Լևոն Խաչիկի		_____	_____
9.	Եղիազարյան Գևորգ Սահակի		_____	_____
10.	Եփրեմյան Արթուր Մեխակի		_____	_____
11.	Գրիգորյան Լուսինե Զավենի		_____	_____
12.	Մովսիսյան Կարեն Սամվելի		_____	_____
13.	Գրիգորյան Վաչիկ Գրիգորի		_____	_____
14.	Ռաայան Լիզա Յաշայի		_____	_____
15.	Ավագյան Ռաֆիկ Լևոնի		_____	_____
16.	Մամո Ավդլայի Սադոյան		_____	_____
17.	Աննա Մարատի Գևորգյան		_____	_____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՈՎԱՐ

ԱՅ ՄԵՏՈՎԱՅԱՆ



12.06.2026թ. | 87-26

**Վաղարշապատ համայնքի ղեկավար
պարոն Արգիշտի Մեխակյանին**

Հարգելի՛ պարոն Մեխակյան,

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան իր գործունեության ողջ ընթացքում մշտապես առաջնահերթ է համարել համայնքային մակարդակում սոցիալական ծառայությունների ենթակառուցվածքների զարգացումը, մասնագետների կարողությունների ամրապնդումը, ինչպես նաև բնակչության կարիքների վրա հիմնված ծառայությունների պիլոտավորումն ու ընդլայնումը: Ասոցիացիայի գործունեության կարևոր ուղղություններից են սոցիալ-հոգեբանական աջակցության որակյալ ծառայությունների մշակումը և մատուցումը, ինչպես նաև համայնքներում նորարարական և կայուն մոտեցումների ներդրումը՝ համահունչ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող համակարգային բարեփոխումներին:

Այս առաքելության շրջանակում Վաղարշապատի Սոցիալական աշխատանքի կենտրոնը, Վաղարշապատի համայնքապետարանի հետ սերտ համագործակցությամբ, համայնքում տեղահանված և տեղացի ընտանիքներին ու անհատներին տրամադրում է սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ՝ միաժամանակ իրականացնելով խոցելի բնակչության ինքնազբաղվածության խթանման ծրագրեր միջազգային գործընկերների աջակցությամբ: Ներկայումս այդ աշխատանքներն իրականացվում են ՄԱԿ-ի Փախստականների գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցությամբ:

Վերջին տարվա ընթացքում իրականացված աշխատանքները փաստում են, որ համայնքում նման ծառայությունների պահանջարկն ու անհրաժեշտությունը շարունակում են մնալ բարձր: Միաժամանակ, հաշվի առնելով միջազգային դոնորական ֆինանսավորման սահմանափակ և ոչ մշտական բնույթը՝ Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան նախատեսում է լիցենզավորել Վաղարշապատի Սոցիալական աշխատանքի կենտրոնը, ինչը հնարավորություն կստեղծի հետագայում ապահովել ծառայությունների կայուն ֆինանսավորում՝ սոցիալական ծառայությունների պետական պատվիրակման շրջանակում:

Լիցենզավորման պարտադիր նախապայմաններից է կենտրոնի կողմից օգտագործվող տարածքի նկատմամբ առնվազն հինգ տարի ժամկետով օգտագործման իրավունքի առկայությունը: Նկատի ունենալով, որ ներկայումս համայնքապետարանի կողմից կենտրոնին տարածքը տրամադրվել է անհատույց օգտագործման իրավունքով՝ երեք տարի ժամկետով, խնդրում ենք երկարաձգել տարածքի անհատույց օգտագործման ժամկետը ևս երեք տարով՝ ապահովելով լիցենզավորման պահանջներին համապատասխանությունը:

Վստահ ենք, որ համայնքապետարանի շարունակական աջակցությունը կնպաստի Վաղարշապատ խոշորացված համայնքում սոցիալական պաշտպանության համակարգի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը, ինչպես նաև բնակչության սոցիալական բարեկեցության բարձրացմանը:

Նախապես շնորհակալություն ենք հայտնում համագործակցության և մեր խնդրանքի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար:

Հարգանքով՝

S. Akhizyan

Մ. Անտոնյան

Նախագահ, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա





ARMENIAN ASSOCIATION OF SOCIAL WORKERS

26.08.2025 | AASW 71/25

**Վաղարշապատ համայնքի ղեկավար
Արգիշտի Մեխակյանին**

Հարգելի՛ պարոն Մեխակյան,

Նախ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել Ձեզ և Վաղարշապատի համայնքապետարանի ողջ թիմին արդյունավետ և կառուցողական համագործակցության համար, ինչի շնորհիվ, համաձայն սույն թվականի օգոստոսի 22-ին Վաղարշապատի համայնքապետարանի և Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի միջև կնքված Համագործակցության հուշագրի, մեր ջանքերը կուղղենք համայնքում սոցիալական աշխատանքի ծառայությունների զարգացմանը, մասնավորապես, հիմնելով Սոցիալական աշխատանքի կենտրոն:

Սոցիալական աշխատանքի կենտրոնը յուրահատուկ մոդելով աշխատող համայնքային ծառայության օրինակ է, որը համալիր սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայություններ է տրամադրում տեղացի խոցելի և տեղահանված ընտանիքներին, ինչպես նաև իր ջանքերն ուղղելու վերապատրաստումների և մասնագիտական սուպերվիզիայի միջոցով ամրապնդելու համայնքում սոցիալական ոլորտի աշխատուժի կարողությունները:

Ծառայությունների արդյունավետ տրամադրումն ապահովելու նպատակով, խնդրում ենք Ձեր աջակցությունը Վաղարշապատ համայնքի վարչական տարածքում տրամադրելու համապատասխան տարածք, առնվազն 4 սենյակ՝ 3 տարի անհատույց ժամկետով: Սենյակները ծառայելու են խոցելի բնակչությանը անհատական և խմբային ձևաչափերով սոցիալական և հոգեբանական խորհրդատվության, հոգեբանական թերապիայի, արտթերապևտիկ ծառայությունների տրամադրման, շահառուների համար իրազեկման հանդիպումների և դասընթացների կազմակերպման և այլ ծառայությունների տրամադրման համար: Այս համատեքստում, Ասոցիացիան նախատեսում է սենյակների և մեկ սանհանգույցի ամբողջական վերանորոգում և կահավորում, ջեռուցման համակարգի ապահովում, ինչպես նաև մասնագիտական թիմի վերապատրաստում ու աշխատավարձեր:

Ի լրումն, վերոնշյալի ակնկալում ենք համայնքապետարանի կողմից վերանորոգված տարածքների կոմունալ վարձավճարների փոխհատուցումը ծառայությունների տրամադրման ողջ ընթացքում:

Հուսով ենք, որ այս համագործակցությունը կնպաստի համայնքում սոցիալական ծառայությունների էկոհամակարգի զարգացմանն ու բարելավմանը:

Կից՝ ներկայացնում ենք Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կանոնադրությունը և Սոցիալական աշխատանքի կենտրոնի աշխատանքի մեթոդաբանությունը:

Հարգանքով՝

Մ. Անտոնյան

Միրա Անտոնյան

Նախագահ | Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա



Կապարող՝ Ա. Ասարյան
(հեռ.՝ 093267306)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ԵՎ
ՎԱՂԱՐԺԱՊԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ

ք. Վաղարշապատ

22 Օգոստոս 2025թ.

«Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս նախագահ Միրա Անտոնյանի և Վաղարշապատի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Արգիշտի Մեխակյանի (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն Համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. Հուշագրի առարկան.

Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են ջանքերի և ռեսուրսների համատեղման սկզբունքով Վաղարշապատ համայնքում հիմնել Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն (Սոցիալական աշխատանքի կենտրոն), որի գործունեությունը կկազմակերպվի Ասոցիացիայի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում:

Հոդված 2. Համագործակցության նպատակները.

2.1. Վաղարշապատ համայնքում «Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիա» հասարակական կազմակերպության հետ համատեղ ստեղծել Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն (Սոցիալական աշխատանքի կենտրոն), որի նպատակն է՝

2.1.1. Սոցիալ-հոգեբանական ծառայությունների մատուցում՝ տեղահանված և տեղաբնակ ընտանիքների համար, կատարել կարիքի գնահատում, հոգեբանական խմբային և անհատական աշխատանքներ, սոցիալական դեպքի վարում, միջոցառումների կազմակերպում, սոցիալականացմանն ուղղված խմբային և

անհատական աշխատանքներ, հատուկ մասնագետի, այն է, արտաթերապևտի, լոգոպեդի և պարաթերապևտի ծառայությունների մատուցում:

2.1.2. Վաղարշապատ համայնքում Ասոցացիայի հետ համատեղ Սոցիալ-հոգեբանական աջակցության կենտրոն ստեղծելու համար Վաղարշապատի համայնքապետարանը կորամադրի տարածք՝ վերը նշված ծառայությունները իրականացնելու համար:

**«Հայաստանի սոցիալական
աշխատողների ասոցիացիա» ՀԿ
Նախագահ՝ Միրա Անտոնյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծարավ Աղբյուր
55/5, բն. 283
Հեռ.՝ +374 60 540 150

**Վաղարշապատի համայնքապետարան
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝
Արգիշտի Մելսակյան**

Հասցե՝ ք. Էջմիածին, Սուրբ Մեսրոպ
Մաշտոց 0
Հեռ.՝ +374-231-53663/224/301/121





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 152-Ա

«24» հունիսի 2025թ.

ք. Էջմիածին

**ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի պահանջներով, հիմք ընդունելով ««ՄԻԱՍԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական» ՀԿ-ի գործադիր տնօրեն Գևորգ Աշոտի Չիչյանի 12.06.2026 թվականի դիմումը և Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ««ՄԻԱՍԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական» հասարակական կազմակերպությանը 2 /երկու/ տարի ժամկետով անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Վաղարշապատ համայնքի սեփականությունը հանդիսացող Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի փողոցի 8 շենքի 1-ին հարկի բացվածք հասցեում գտնվող 99,8քմ մակերեսով տարածքը, տարեցների զբաղվածությունը ապահովելու, սոցիալ-հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով, որպես գրասենյակ օգտագործելու համար:

2. ««ՄԻԱՍԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական» հասարակական կազմակերպության հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Մեխակյան Արգիշտի Մեխակի		_____	_____
2.	Յայլոյան Լյուդվիկ Գրիշայի	_____	_____	_____
3.	Նիկողոսյան Գոհար Մոսիտի		_____	_____
4.	Թովմասյան Սաթենիկ Ռաֆիկի		_____	_____
5.	Մելիքյան Ներսես Ռոբերտի		_____	_____
6.	Խոստենյան Նորայր Պողոսի		_____	_____
7.	Ենգիբարյան Լիլիթ Ալբերտի		_____	_____
8.	Խաչատրյան Լևոն Խաչիկի		_____	_____
9.	Եղիազարյան Գևորգ Սահակի		_____	_____

- 10. Եփրեմյան Արթուր Մեխակի
- 11. Գրիգորյան Լուսինե Զավենի
- 12. Մովսիսյան Կարեն Սամվելի
- 13. Գրիգորյան Վաչիկ Գրիգորի
- 14. Ռաայան Լիզա Յաշայի
- 15. Ավագյան Ռաֆիկ Լևոնի
- 16. Մամոն Ավդյալի Սադոյան
- 17. Աննա Մարատի Գևորգյան

[Handwritten signatures for items 10-17]

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ՝

ԱՄԵՆԱԿՅԱՆ



Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի
ղեկավար՝ պարոն Արգիշտի Մեխակյանին

ավիաներն, կրթամշակութային, առօրյա մասնաճյուղ, հոգևոր-
բուժարհաբանական համալսարաններ - ՌԳ. շրջափայտ
/քաղաք, գյուղ/ /հասցե/

Ջեյրաթ Սեդրազիզ Զիջյան ից
/անուն, հայրանուն, ազգանուն/

Հեռախոս 093572123

Էլ. փոստ miasin@k2022@gmail.com

ԴԻՄՈՒՄ

Դիմելու գիրքով, արգելե՛ք ուղի ձեզ ցույց տալու համայնքում
իրականացված 5 փուլով իրականացված, որի շահույթա-
ներթի թիվը շուրջ 40 է: Սեփազ սերունդի ներհայացման ներքին
համայնք հանդիսանալու համաձայն իրականացված երեք փուլի
համար և փորձելով փորձակներ, սրբաբերական, հոգեբանական
հարցերն առիթներով, երանջարակներով:

Դիմարան երեք ավիաներն >> ՌԳ-ին կրթամշակութային ծախսերի
փորձարկման ներքին իրականացման շնորհիվ կատարվող
մ. մարզում մ. ծախսերն էլ իրականացնել:

Կից ներկայացնում եմ

- 1 Վերջին արգի
- 2 Պետական հրատեսակներ գրանցամատյանները կատարված
- 3 _____
- 4 _____
- 5 _____

Դիմող Զույն
/ստորագրություն/

ՌԳ. շրջափայտ Ջեյրաթ Զիջյան
/անուն, ազգանուն/

<< 11 >> 06 2026թ

Սույն քաղվածքը գեներացվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի կողմից՝ 2026-06-12 թ. ժամը 12:26 դրությամբ: Այն արտացոլում է հարցման պահին առկա վավեր տեղեկատվությունը, որը տրամադրվել է նաև թվային եղանակով:



**ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ**

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ԶԱՂՎԱԾԵ ԹՎ 2026-06-12

**«ՄԻԱՍԻՆ» ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ՀՈԳԵՎՈՐ-
ԴԱՍՏԻԱՐԱԿԳՉԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ
Հասարակական կազմակերպություն (ՀԿ)**

2022թ., 2022-08-25, Անժամկետ

հիմնադրման տարի, գրանցման ամսաթիվ, գործունեության ժամկետ

**Լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման
մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված
չեն:**

կարգավիճակ

04444239, 211.171.1260532

հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ), գրանցման համար

miasinhk2022@gmail.com

Էլ. փոստ

53479540

եզակի նույնականացուցիչ - ՁԿԴ

Գրառված չէ

կայք

ԱՐՄԱՎԻՐ ՎԱՂԱՐՇԱԴԱՏ ԷԶՄԻԱԾԻՆ ԾԻՐՎԱՆՁԱԴԵ Փ. 26 Տ Փ/Դ՝ 1102

հասցե

94.99.0

տնտեսական գործունեության դասակարգիչ

+374 93-572-123

հեռախոսահամար

Գործադիր մարմնի ղեկավար

ԳԵՎՈՐԳ ԶԻՉՅԱՆ ԱՇՈՏԻ

անուն ազգանուն

AP0504065 տրված 2016-07-25-ին 057-ի կողմից

անձնագրային տվյալներ

Հայաստանի ԱՐՄԱՎԻՐ ՎԱՂԱՐՇԱԴԱՏ ԷԶՄԻԱԾԻՆ ԾԻՐՎԱՆՁԱԴԵԻ Փ. 26 Տ Փ/Դ՝ 1102

հասցե



Սույն քաղվածքը գեներացվել է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգի կողմից՝ 2026-06-12 թ. ժամը 12:26 դրությամբ: Այն արտացոլում է հարցման պահին առկա վավեր տեղեկատվությունը, որը տրամադրվել է նաև թվային եղանակով:

Պետական միասնական գրանցամատյանում փոփոխություններ

2026-01-26		Նոր խմբագրմամբ կանոնադրություն
2022-08-26	7	Տվյալների ուղղում տվյալների շտեմարանում
	2	

Իրավահաջորդության/իրավանախորդության վերաբերյալ տեղեկություններ գրառված չեն
քաղվածքը տրամադրող՝ ԱՆ ԻԱ պետական ռեգիստրի թվային ծառայությունների հարթակ
Տրամադրման ամսաթիվ՝ 2026-06-12 12:26

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է

Մ Ե Ֆ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ա Ն
(սեփականության կամ օգտագործման)

ԻՐԱՎՈՒՆՔՈՎ

Է Զ Մ Ի Ա Ծ Ն Ի Բ Ա Ղ Ա Բ Ա Յ Ի Ն Գ Ա Ա Ա Յ Ն Բ Ի Ն
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Բ Ա Ղ Ա Բ Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

Մ. Կ Ա Յ Տ Ո Յ Ֆ Ո Ղ Ո Յ № 8 Ձ Յ Ն Բ I-Գ Ա Բ Կ, Բ Ա Յ Վ Ա Ծ Բ Ի Ե Կ Ա Տ Ս Ա Ս Բ

(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

Կ Կ Կ Ա Ա Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն 14-03-1997թ. Թ Ի Կ 51 Ո Ր Ո Ձ Մ Ա Ն Գ Ի Մ Ա Ն Կ Ր Ա

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ Ե Կ Ա Տ Ս Ա Ս Բ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ՕԿ-ՕՕՂ-Ղ-1 ՄԱՏՅԱՆԻ ՕՕՐԻՄՈ ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՅՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
Կ. ՊԵԿԱՎԱՐ
2. Գ Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Յ Ա Ն
(ստորագրությունը)
« 21 » Ն Ո Յ Ե Մ Բ Ե Ր Ի 2007թ.

2545811

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ


(մասշտաբը)

1:100



Կատարող *[Signature]* **Տ. ՄԱՐԿԵԼՅԱՆ**
(ստորագրությունը)

[Signature] **Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ**



ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____
 ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) _____
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ _____

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ


ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 04-002
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԲԱՅԿԱԾՔ
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) 99,8
 ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գ/Գ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍԱԿԸ

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ _____

Կատարողներ Ս. ԱՎԿԵՅԱՆ
 (ստորագրություններ)
Վ. ԾԱԶՆԱՆ



ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____
 ՀՈՂԱՄԱՍԻ ԶԱՓԸ (հա) _____
 ԻՐԱՎՈՒՆԵՐ ՏԵՍԱԿԸ _____

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 04-002
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԲԱՅԿԱԾՔ
 ՄԱԿԵՐԵՄԸ (քառ. մ.) 99,8
 ԻՐԱՎՈՒՆԵՐ ՏԵՍԱԿԸ ՎԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Դ/Դ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՄԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆԵՐ ՏԵՍԱԿԸ

Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ _____



Կատարողներ Ս. ԿԱԿՅԱՆ
(անորազրույցները)
Վ. ԾԱԶՆԱՆ

Կազմված է 13 հունվար 2026 թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 3 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏՏՎԱԾ Է

ԳՐԱՆՑՎԱԾ Է

«ՄԻԱՍԻՆ» ԿՐԹԱՍՇՏԱԿՈՒԹԱՅԻՆ,
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ՀՈԳԵՎՈՐ - ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ
ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«25» ՕԳՈՍՏՈՍԻ 2022թ.

«13» ՀՈՒՆՎԱՐԻ 2026թ.


ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.1260532

ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ
04444239

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

«25» ՕԳՈՍՏՈՍԻ 2022թ.


(ստորագրություն)

ԳԵՎՈՐԳ ԶԻՉՅԱՆ

(անուն, ազգանուն)

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

ՓՈՓՈԿՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՆՑՎԱԾ

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



« _____ » _____ 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԻԱՍԻՆ»

ԿՐԹԱՍՇՏԱԿՈՒԹԱՅԻՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ՀՈԳԵՎՈՐ - ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«ՄԻԱՄԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, ՀՀ երկքաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց հասարակական միավորում է, որն ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

2. Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

3.Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

4.Կազմակերպության անվանումն է՝ «ՄԻԱՄԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական հասարակական կազմակերպություն:

5.Հայերեն «ՄԻԱՄԻՆ» կրթամշակութային, սոցիալական, հոգևոր-դաստիարակչական համահայկական հասարակական կազմակերպություն, կրճատ՝ «ՄԻԱՄԻՆ» համահայկական հասարակական կազմակերպություն, հապավումը՝ ՄԿՄՀՀ ՀԿ:

Ռուսերեն՝ «МИАСИН» культурно-образовательная, социальная, духовно-воспитательная всеармянская общественная организация, կրճատը՝ Всеармянская общественная организация «МИАСИН», հապավումը՝ МКСДВОО:

Անգլերեն՝ “MIASIN” educational, cultural, social and spiritual-pedagogical pan-Armenian non-governmental organization, կրճատը՝ “MIASIN” pan-Armenian NGO, հապավումը՝ MCSSP NGO:

6.Կազմակերպությունն ունի խորհրդանիշ խատուտիկ-առագաստանավի պատկերով, որն արտացոլում է հայոց ամբողջականությունն ու հոգևոր-ազգային վերածնունդը:

Խատուտիկը որպես մասն ամբողջ դարձնելու խորհրդանիշ և ունի բաց ծովում լողացող առագաստանավի տեսք: Առագաստը քամու ուժով առաջ մղելով նավը՝ հայ ժողովրդին հանգրվանում է Հայրենիքում:

Խատուտիկից պոկված սերմերը, որոնք խորհրդանշում են աշխարհասփյուռ հայերին, վերադառնում են իրենց «արմատին» որպես միասնականության և նոր սկզբի ավետում: Դեպի խատուտիկ ձգվող սերմերի թիվը յոթն է՝ արտացոլելով հայոց այբուբենի յոթերորդ սրբազան թիվը, որն աստվածային էության խորհուրդ ունի:

Գույները ևս իրենց նշանակությունն ունեն. շագանակագույնը խորհրդանշում է հայրենի հողը, կանաչը՝ հավերժությունը, կապույտը՝ խաղաղությունը:

7.Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ՀՀ, Արմավիրի մարզ, քաղաք Էջմիածին, Շիրվանզադե 26 տուն, էլ. հասցե՝ miasinhk2022@gmail.com:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊՏԱԿՆԵՐԸ

8.Կազմակերպության գործունեության առարկան և նպատակները՝

1)Կազմակերպել և իրականացնել մշակութային փառատոներ, համերգներ, մրցույթներ, ցուցահանդես-վաճառքներ, շնորհանդեսներ Համագործակցելով Հայաստանի և Սփյուռքի համահայկական կառույցների հետ՝ Հայաստան-Արցախ-Սփյուռք կապերի ամրապնդման, միջմշակութային երկխոսության ձեռքբերման ու ամրապնդման, հայկական մշակութային ժառանգության ցուցադրության, հայապահպանության, Հայաստանի մարզերում զբոսաշրջության խթանման, Հայաստանի միջազգային ճանաչելիության բարձրացման նպատակով:

Իրականացնել ճանաչողական այցեր Հայաստանի պատմական, մշակութային և

հոգևոր վայրեր: Գյուղական համայնքներում վերականգնել ազգային ավանդույթներն ու սովորույթները, արհեստները, աշխուժացնել մշակութային կյանքը, օժանդակել ձեռնարկատիրական գործունեության զարգացմանը:

2) Կազմակերպել գիտական և գործնական ֆորումներ, սիմպոզիումներ, գիտաժողովներ, կլոր-սեղաններ, բանավեճեր՝ գիտության, կրթության, մշակույթի, տնտեսագիտության, հոգեբանության և այլ ոլորտներում արդի հարցերի շուրջ Հայկական համայնքների աջակցությամբ Հայկական սփյուռքի հետ համատեղ:

3) Իրականացնել հայերի էթնիկ ինքնության ուսումնասիրություն և հետազոտություն, աջակցել սփյուռքում հայ երիտասարդության առկա կարծրատիպերի ընկալման հաղթահարմանը և աշխարհաքաղաքական, սոցիալական, կրթական և մշակութային ոլորտներում հայերի իրական ներկայացվածության ձևավորմանը:

4) Բացահայտել Սփյուռքի կրթության, մշակույթի, գիտության, սպորտի ոլորտների նոր դեմքերին՝ նպաստելով նրանց հանրահռչակմանը:

5) Կազմակերպել Հայկական սփյուռքի համայնքներում համազգային և համահայկական նշանակության միջոցառումներ Հայկական մշակույթի տարածման և զարգացման նպատակով:

6) Իրականացնել Հայաստանի Հանրապետության մարզերում և Երևան քաղաքում կրթամշակութային և երիտասարդական ծրագրեր, սպորտային միջոցառումներ, ճամբարներ: Կազմակերպել վերապատրաստումներ, դասընթացներ և այլ միջոցառումներ մանկապարտեզներում, նախակրթարաններում, դպրոցներում և բուհերում ոչ ֆորմալ կրթության միջոցով:

7) Մշակել և իրականացնել հայապահպանությանն ու հայկականությանը, մայրենիին, առանձնապես արևմտահայրենի պահպանմանը, տարածմանը և իմացության մակարդակի բարձրացմանն ուղղված ծրագրեր:

8) Նպաստել հանրապետության մարզային համայնքների սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը, գյուղատնտեսության, առողջապահության, բնապահպանության, շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական մշակույթի ոլորտներում եղած խնդիրների լուծմանը համայնքի անդամների իրավունքների և շահերի պաշտպանության, այդ թվում՝ հրատարակչական միջոցներով:

9) Կազմակերպել համահայկական մարաթոններ, դրամահավաքներ և այլ նախաձեռնություններ՝ ՀՀ սահմանամերձ շրջանների, Արցախի անապահով ընտանիքներին, Արցախյան պատերազմից տուժած և զոհված քաղաքացիների ընտանիքներին աջակցելու, ինչպես նաև նոր դպրոցներ, մշակութային հաստատություններ և այլ կառույցներ հիմնելու կամ եղածները վերանորոգելու նպատակով:

10) Աջակցել Հայաստանի և Սփյուռքի համահայկական կառույցներին և անհատներին՝ Հայաստանին և Արցախին ուղղված օժանդակությունները նպատակային և հասցեական կազմակերպելու հարցում:

11) Ցուցաբերել բարոյահոգեբանական աջակցություն մանկատան սաներին և ծերանոցների շահառուներին՝ այցելությունների և այլ նախաձեռնությունների միջոցով նրանց հասարակական կյանքի ինտեգրման ուղղությամբ:

12) Կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական և մարզամշակութային միջոցառումներ (ցերեկույթներ, երեկոներ, սիմպոզիումներ, ցուցահանդես-վաճառքներ, համերգներ):

13) Կազմակերպել Տարեցների (ևսև ծերանոցների շահառուների) ժամանցն ու հանգիստն ապահովելու նպատակով ճամբարներ և այցելություններ Հայաստանի պատմամշակութային վայրեր:

14) Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, հոգեբանական, կրթական, կրթաուսումնական, մշակութային և ժամանցային աջակցության ապահովումը:

15)Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավումը, սոցիալական ներառման խթանումը և սոցիալական մեկուսացման կանխարգելումը:

16)Միջսերնդային կապերի ամրապնդումը և համայնքային համերաշխության զարգացումը:

17)Խոցելի խմբերի աջակցմանն ուղղված ծրագրերի իրականացումը, ներառյալ տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ծրագրերը:

18)Երիտասարդների քաղաքացիական ակտիվության, սոցիալական պատասխանատվության և առաջնորդական կարողությունների զարգացումը միջսերնդային ծրագրերի շրջանակներում:

19)Տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնների ստեղծումը, կազմակերպումը և գործունեության իրականացումը սոցիալական, հոգեբանական, կրթական, մշակութային և ժամանցային ծառայությունների մատուցմամբ, ներառյալ օրական մեկանգամյա սնունդ, սոցիալ-հոգեբանական և իրավական աջակցություն, կրթաուսումնական ծառայություններ, մասնագիտական կողմնորոշում, արվեստի և օկուպացիոն թերապիայի ծրագրեր, էքսկուրսիաներ, ինչպես նաև աշխատանքային վերականգնման անհատական ծրագրերի մշակում և իրականացում:

20)Տարեցների համար սոցիալական սպասարկման այլ ձևաչափերի իրականացումը, այդ թվում՝ ակումբների, համայնքային խմբերի և շարժական ծառայությունների միջոցով:

21)Կրթական, մշակութային, առողջապահական, վերականգնողական և հոգևոր-դաստիարակչական ծրագրերի իրականացումը տարեցների և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

22)Միջսերնդային համագործակցության և երկխոսության խթանումը՝ տարեցների և երիտասարդների համատեղ ծրագրերի, կամավորական նախաձեռնությունների և միջոցառումների միջոցով:

23)Երիտասարդների կարողությունների զարգացման, քաղաքացիական ակտիվության խթանման և առաջնորդական հմտությունների ձևավորման ծրագրերի իրականացումը:

24)Երիտասարդների ներգրավումը կազմակերպության սոցիալական, կրթամշակութային և կամավորական նախաձեռնությունների իրականացման մեջ:

25)Տարեցների հետ աշխատանքի, սոցիալական խնամքի և միջսերնդային համագործակցության ոլորտներում տեղական և միջազգային վերապատրաստումների, սեմինարների, աշխատարանների և ուսուցողական ծրագրերի կազմակերպումը և դրանց մասնակցությունը:

26)Հետազոտությունների, քննարկումների և հանրային միջոցառումների կազմակերպումը:

27)Համագործակցությունը պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ:

28)Դրամաշնորհային և բարեգործական ծրագրերի իրականացումը կազմակերպության կանոնադրական նպատակներին համապատասխան:

29)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնել և կառավարել տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական հոգածության կենտրոններ, այդ թվում՝ սոցիալական սպասարկման ցերեկային կենտրոններ:

30)Իրականացնել ծրագրային և կազմակերպչական գործունեություն Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքում և դրա սահմաններից դուրս:

31) Ընդգծելով Հայ Առաքելական Եկեղեցու համահավաք նշանակությունը Հայաստանում և Սփյուռքում՝ սերտորեն համագործակցել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, հայաստանյան և սփյուռքյան թեմերի, Նվիրապետական աթոռների՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարքության, Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հետ: Համագործակցել նաև Հայ Կաթողիկե եկեղեցու հետ (Մխիթարյան միաբանություն):

32) Համագործակցել պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային և օտարերկրյա համանման կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետությունում գրանցված այլ կազմակերպությունների հետ:

33) Կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան շնորհել հուշամեդալներ, պատվոգրեր, շնորհակալագրեր, հավաստագրեր և այլն:

34) Կազմակերպությունն իրավունք ունի իր կանոնադրությամբ սահմանված նպատակներին համապատասխան իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, այդ նպատակով տնօրինելու իր գույքը և գործունեության արդյունքները, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ստեղծելու առևտրային կազմակերպություն կամ դառնալ նրա մասնակից:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՂԱՍ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

10. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ, որն ընդունում է Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված նպատակները և ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը:

11. Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը զրավոր դիմում է Կազմակերպության գործադիր մարմնին՝ Նախագահին:

12. Կազմակերպության անդամության մեջ ընդունելու հարցը լուծում է Նախագահը՝ սույն Կանոնադրության հիման վրա:

13. Կազմակերպության անդամը ցանկացած ժամանակ ազատ է դուրս գալու Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից հեռացումը կատարվում է Նախագահի որոշմամբ:

14. Կազմակերպության անդամների համար անդամավճար չի սահմանվում:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

15. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

- 1) ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում,
- 2) ներկա գտնվելու Ժողովին անձամբ,
- 3) ցանկացած դեպքում անվճար օգտվելու Կազմակերպության ծառայություններից,
- 4) ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալու նրանց ընդունած որոշումների պատճենները,
- 5) վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները: Կազմակերպության անդամի կողմից Գործադիր մարմնի որոշումների բողոքարկումն իրականացվում է Ժողովին համապատասխան դիմում ներկայացնելու եղանակով: Դիմումը քննարկում է Ժողովը:

Դիմումի քննարկումը կարող է կատարվել նաև հեռակա կարգով,

- 6) կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների,

Կազմակերպության մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին 3 տարիներին,

7) իրականացնելու օրենքով սահմանված այլ իրավունքներ:

16. Կազմակերպության անդամը պարտավոր է՝

1) կատարել Կազմակերպության կանոնադրական պահանջները և կառավարման մարմինների որոշումները,

2) բարեխղճորեն կատարել կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները:

17. Կազմակերպության կանոնադրական պահանջները խախտելու կամ Կազմակերպության կառավարման մարմինների որոշմամբ իր վրա դրված պարտականությունները չկատարելու դեպքում Կազմակերպության անդամի նկատմամբ Կազմակերպության նախագահի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության կամ Կազմակերպության անդամությունից հեռացնելու ձևով:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Կազմակերպության կառավարման մարմիններն են Ժողովը և Գործադիր մարմինը՝ Նախագահը:

19. Կազմակերպության գործունեությանն առնչվող ցանկացած հարցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

20. Կազմակերպության հերթական ժողովը գումարվում է հինգ տարին մեկ անգամ: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է Նախագահը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Նախագահը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և վայրը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ, քան 20 օր առաջ պատվիրված նամակով կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է Կազմակերպության անդամներին և կառույցներին:

21. Կազմակերպության արտահերթ ժողովը հրավիրվում է Նախագահի կամ Կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ Նախագահի կողմից:

22. Կազմակերպության արտահերթ ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ ժողովը գումարելու ժամանակի և վայրի մասին ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ ժողով անցկացնելու օրվանից առնվազն 5 օր առաջ:

23. Ժողովի բացառիկ իրավասության հարցերն են՝

1) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, լրացումների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը,

2) Այլ իրավաբանական անձի ստեղծման կամ այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին որոշման ընդունումը,

3) Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ ստեղծելու և դրանց կանոնադրությունները հաստատելու մասին որոշումների ընդունումը,

4) Կազմակերպության կառուցվածքի հաստատումը,

5) Կազմակերպության Նախագահի ընտրությունը և փոփոխումը,

6) Կազմակերպության Նախագահի վարձատրության կարգի և պայմանների սահմանումը,

7) Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի ընտրությունը, եթե օրենքի համաձայն Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի,

8) Կազմակերպության ռազմավարության հաստատումը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն,

9) հինգ տարին մեկ անգամ գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունների հաստատումը,

10) Կազմակերպության մարմինների՝ իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողության դադարեցումը,

11) Կազմակերպության վերակազմակերպման մասին որոշման ընդունումը,

12) Կազմակերպության լուծարման (բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի) մասին որոշման ընդունումը,

13) օրենքով նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

24. Ժողովն իրավագոր է, եթե գումարվել է օրենքին և Կազմակերպության կանոնադրությանը համապատասխան, և Ժողովին մասնակցում է Կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Ժողովի որոշումներն ընդունվում են Կազմակերպության Ժողովին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են 5 տարի:

25. Նախագահն ընտրվում է Ժողովի կողմից հինգ տարի ժամկետով: Կազմակերպության գործադիր մարմինը կազմակերպության նախագահն է: Նախագահը ղեկավարում է կազմակերպության ընթացիկ գործունեությունը և վարում է ժողովի նիստերը:

26. Նախագահի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը:

27. Նախագահը Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի որոշումների կատարումը,

2) տնօրինում և կառավարում է Կազմակերպության ցանկացած տեսակի և չափի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Կազմակերպության անունից,

3) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,

4) տալիս է լիազորագրեր,

5) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

6) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

7) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը,

8) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները,

9) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները,

10) հաստատում է Ժողովների գումարմանը նախորդող տարիների Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք հինգ տարին մեկ անգամ ներկայացնում է Ժողովի հաստատմանը,

11) ընդունում է Կազմակերպության անդամ և հեռացնում Կազմակերպության

անդամությունից,

12) իրականացնում է օրենքով սահմանված այլ լիազորություններ:

28.Նախագահն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

29.Նախագահը կրում է օրենքով նախատեսված պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, Կազմակերպության կանոնադրության, Ժողովի որոշումների կամ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

31. Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք՝ շենքեր, շինություններ, տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք:

32. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են լինել՝

1) Կազմակերպության անդամների ներդրումները,

2) Կազմակերպության ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները,

3) իր ստեղծած կամ իր մասնակցությամբ այլ առևտրային կազմակերպությունից ստացված միջոցները,

4) դրամական մուտքերը պետական բյուջեից,

5) նվիրաբերությունները, այդ թվում՝ դրամաշնորհները,

6) հանգանակությունները,

7) օրենքով չարգելված այլ միջոցներ:

33. Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար: Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը, նրա անդամների միջև չի կարող բաշխվել:

VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ


34. Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի վճռով:

35. Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները: Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը Ժողովի որոշմամբ սահմանված կարգով օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, դրամական միջոցները փոխանցվում են պետական բյուջե, իսկ այլ գույքը սեփականության իրավունքով փոխանցվում է Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս Կառավարության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

36. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ օրենքով սահմանված դեպքերում դատարանի վճռով՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կանոնադրությունը կազմված է 2026 թվականի հունվարի 13-ին:

سورہ





**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 153-Լ

«24 » հունիսի 2026թ.

ք. Էջմիածին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՏԱՇԵՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Համայնքի ավագանին







ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական առաջին նիստի գումարման օր սահմանել՝ 2026 թվականի սեպտեմբերի 8-ին, ժամը 16:00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Հ/Հ	Ազգանուն Անուն Հայրանուն	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
1.	Մեխակյան Արգիշտի Մեխակի		_____	_____
2.	Յայլոյան Լյուդվիկ Գրիշայի		_____	_____
3.	Նիկողոսյան Գոհար Մոսիտի		_____	_____
4.	Թովմասյան Սաթենիկ Ռաֆիկի		_____	_____
5.	Մելիքյան Ներսես Ռոբերտի		_____	_____
6.	Խոստեխյան Նորայր Պողոսի		_____	_____
7.	Ենգիբարյան Լիլիթ Ալբերտի		_____	_____
8.	Խաչատրյան Լևոն Խաչիկի		_____	_____
9.	Եղիազարյան Գևորգ Սահակի		_____	_____
10.	Եփրեմյան Արթուր Մեխակի		_____	_____

- 11. Գրիգորյան Լուսինե Զավենի
- 12. Մովսիսյան Կարեն Սամվելի
- 13. Գրիգորյան Վաչիկ Գրիգորի
- 14. Ռաայան Լիզա Յաշայի
- 15. Ավագյան Ռաֆիկ Լևոնի
- 16. Մամոն Ավդիայի Սադոյան
- 17. Աննա Մարատի Գևորգյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԵՆԱԿՅԱՆ